

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### «Շահող կտրոն» վիճակահանության արդյունքների մասին

ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարների 2010 թվականի փետրվարի 6-ին կայացած վիճակահանության արդյունքում հայտնի դարձած շահող թվերն են (առաջին նիշից սկսած հաջորդական հերթականությամբ)՝

8	0	4	3	3	1	1	3
---	---	---	---	---	---	---	---

2010 թվականի փետրվարի 6-ին կայացած վիճակահանությանը մասնակցել են միայն 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 31-ը ներառյալ քաղաքացիների կողմից ստացած ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարները:

Շահող կտրոններ են համարվում այն կտրոնները, որոնց առաջին 4, առաջին 5, առաջին 6, առաջին 7 կամ առաջին 8 թվերը համընկնում են վիճակահանության արդյունքում հայտնի դարձած թվերին՝ ըստ հաջորդական հերթականության:

Քաղաքացիները շահումները կարող են ստանալ 2010 թվականի փետրվարի 8-ից մինչև 28-ը ներառյալ բանկերի բաժանմունքներում՝ անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, ներկայացնելով նաև անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և կտրոնի բնօրինակը:

**Շահում եք Դուք, շահում է պետությունը**